

ԲԺԻՇԿԻ, ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԻՒԱՆԴԱԵՐՈՒ ՄԱՍԻՆ

I

Մեր մէջ բժիշկի և բժշկութեան մասին տարօրինակ թիւրամացութիւն մը կը տիրէ, յառաջ բերելով ցաւալի հետևանքներ:

Այդ՝ հիւանդին առեւտրական շուկայիկ ընթացքն է:

Հիւանդը, միշտ մեղադրական շեշտով, կը պահանջէ որ բժիշկի դարմանումը գէթ համապատասխանէ իր վճարումի քանակին: «Եղբայր այնքան դրամ ծախսեցի, բայց օգուտ չտեսայ»: Այս տխուր մտայնութիւնը տրամաբանական արդինքն է բժշկութեան և բժշկի մասին տարածուած սխալ ըմբռնումի մը:

Հիմնական սխալ է բժիշկը վաճառականի հետ միևնոյն գծի վրայ դնել և անոր մօտենալ առեւտրական սկզբունքներով: Լաւագոյն վաճառականն անգամ, իր գործառնութիւններուն մէջ կ'առաջնորդուի առնելու և փոխարինաբար տալու նշանաբանով: Ան իր ինչքը, իբրև ապրանք կը դասաւորէ համաձայն որակին և այդպէս աչ գին կը դնէ:

Լա՞ւ ապրանք կ'ուզես, պէտք է շատ վճարես: Առեւտրականը վճարումիդ համապատասխան ապրանք կը ծախէ: Նոյնը ճիշդ է և քանակի մասին: Երկու ձեռք զգեստի համար կրկինը պէտք է վճարես:

Այդպէս է սակայն բժշկութիւնը, իբրև արհեստ: Ի հարկէ, ո՞չ: Բժիշկը իր այցեղինի «փոխարէն» սպամի կը դնէ իր այն բոլոր ունեցածը, որ անկասկած կը նպաստէ հիւանդութեան շուտափոյթ բուժումին և հիւանդին ապաքինման: Այդ նպատակին հասնելու համար, չի խնայէր իր գիտութիւնը, իր փորձառութիւնը և իր կարողութիւնը: Ան չի գոհանար լոկ հիւանդութիւնը դարմանելով այլ յաճախ հիւանդին կուտայ իր բարոյական օժանդակութիւնը, անոր կը ներշնչէ լաւատեսութիւն, կը խրախուսէ և կը բարձրացնէ անոր հոգեկան կորովը. կարճ խօսքով, բժիշկը հիւանդին կուտայ իր բոլոր ունեցածը. և՛ որակով և՛ քանակով մեծագոյնը:

Ուստի հիւանդները պէտք չէ մոռնան թէ ինչ ալ վճարեր են բժիշկին, քիչ կամ շատ, քանի որ բժիշկը յանձն առեր է դարմանել, անպայման կը գործէ անձնուիրաբար: Վիրաւորական է երբ օրինակ, հիւանդը, կը զիմէ վիրաբոյթին և կ'ըսէ:

«Տօքթոր, պահանջքիդ կրկինը կը վճարեմ, միայն զործողութիւնը լաւ կատարես»:

Բժիշկը անբարեխիղճ ու անգամ ստահակ մը պէտք է ըլլայ որ շատ վճարողը լաւ դարմանէ և քիչ վճարողը՝ գէշ: Բժիշկը ան-

շաւշտ իրաւունք ունի վճարողը կամ սակարկութիւն ընող ունետքը մերժելու, սակայն երբ յանձն կ'առնէ դարմանել, այդ պարագային պիտի ընէ իր լաւազոյնը:

Եւ յետոյ. բժիշկը ի՞նչ շահ ունի զիտակցաբար զէշ և լաւ զարմանուններ կատարելու: «Եյս ունի, կ'ըսէ հիւանդը. զիտմամբ կ'երկարածէ դարմանումը, որպէսզի յաճախակի այցելէ և այցեղինը բազմանայ»: Եթէ այդպիսի բժիշկ զոյութիւն ունի, մենք զայն կը համարենք անարժան իր զիրքին, եղկելի զարառութութիւն մը և միանդամայն ձախաւեր մարդ: Եյդ բարոյազուրկը, որ սպրտեր է բժշկական դասին մէջ, եթէ խորագէտ է և հեռատես, իր սեփական շահին համար իսկ, պիտի զգուշանայ նման արարքէ որովհետեւ որքան արագ ասպաքինի հիւանդը, այնքան ուրախ ու երախտապարտ կը մնայ, այնքան անաչառ կ'ըլլայ անոր գնահատումը և նոյնքան ալ շուտ կը ծաւալի բժիշկին հոչակի, ձեռնահասութեան և ճարտարութեան համբաւը:

Բայց այդ չէ բժիշկի վարձատրութիւնը:

Գերազոյնը, ստեղծագործ մարդուն հսկեկան հաճոյքն է, վսեմ և կենսատու: Հարցուցէք գրողի մը, նկարիչի մը, երգահանի մը, արձանագործի մը թէ հողեկան ի՞նչ անհուն զոհունակութեամբ կը յափշտակուի, երբ իր կերտած գործը կը դժուէ հասունութեան և կատարելութեան մէջ: Աշխատանքի եռանդը կը զօրանայ, հոգին թոփչք կ'առնէ, ինքնավստահութիւնը կը բազմապատկուի և կենսագործ ուժերը կը լարուին նմանապէս և բժիշկը, ինչպիսի հողեպարար բեկրանքով կը պարուրուի, երբ կը տեսնէ որ իր շանքերուն և ճարերուն շնորհիւ անդամալոյն հետզհետէ կը քայլէ, ամլութեան ամօթին և վիշտին տակ ընկճուած կինը երախայ կը ծնի, քոսով ծածկուած տիխեղծ մարմինը կը մաքրուի մարմարի նման, նկուն և կամագուրի ջլախտաւորը կեանքի նոր կայծով կը բռնկի, և ան որ երէկ սև կը տեսնէր աշխարհը, այսօր կը կազտոէ երախտյի մնան:

Ահա այստեղ կ'ամփոփուի բժշկութեան և՝ էութիւնը և՝ մեծութիւնը: Ան՝ հոգիէն կը ծնի և ոչ թէ գրաւանէն: Դրամը, որ կը վճարուի, երբեք համազօր և համարժէք չէ իր աշխատանքին: «Մէկ վայրկեանի մէջ գեղագիր մը կը գրէք և քսան ֆրանք կ'առնէք. այդ ալ յոդնութի՞ւն է»: Ան կը մոռնայ այն փշոտ ու տաժանելի աշխատանքն ու զոհողութիւնը զորս իբրև ուսանող կրած է բժիշկը, կը մոռանայ մանաւանդ մտային և ֆիզիքական այն զգետնող խոնջէնքը զոր բժիշկը կը զգայ արեւմուտին և միշտ կ'անտեսէ այն լարումը, որ անընդհատ կը խթանէ բժիշկին միտքը և ճաշի պահուն, և հանգիստի բոպէներուն և քալած ատեն: Բժիշկը անդադար կ'որոճայ իր հիւանդներու մասին, ախտերու այլազան առեղծուածները լուծելու համար:

Փողը՝ դրամագլուխ չէ բժիշկին համար, այլ հնարաւորութիւն մը, պատեհութիւն մը, ապրելու, զարգանալու, աւելի լաւ ծառայելու և ստեղծագործելու համար: Սնոր պահանջները բազմաթիւ են և բազմազան: Բժիշկը պէտք ունի անընդհատ զարգանալու հետեւմը վիտական զրականութեան, այցելելով վիտական ստաններ և համագումարներ, մէկ խօսքով կատարելազործուելու համար: Սակայն անոր զարգացումը չի սահմանափակուիր լոկ վիտական անձուկ ոլորտի մէջ, ան պէտք ունի նաև զեղարուեստական վայելքի, զզացումներու և սկզբունքներու մշակման, հանրային և ընկերային զարգացման: Որովհետեւ բժիշկը սոսկ արհեստաւոր չէ, այլ առանձնապէս հանրային գործիչ է և վերազանցօրէն ընկերային մարդ:

Դեռ առիթ կ'ունենանք այլ թիւրամացութիւններուն անդրադառնալու:

Փարիզ

ԲԺ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

«ԲՈՒԺԱՆՔ» Ի ՊԱՏՄԱԿԱՆՆԵՐԸ

Պ. Ռ. Ռ. (Պէրլին).— Թիւրիմացութեան մէջ էք: Սիֆիլիսի մը սկզբնաւորութեան ատեն, բացարձակապէս անվարելի նախօրով գուշակել անոր թեթեւ կամ մանր րլլալը: Աւելին, յանախի երեսոյթով թեթեւ: Սկզբնաւորութիւնն ունեցող սիֆիլիսները, յսոտագային ամենէն վուանգաւոր հետեւանքները կ'ունենան: Հետեւարար մխտական պատասխան կուտանք մեր այն հարցումին թէ «որուած ըլլալը սիֆիլիսի դէմ գործածուած դեղերու վնասակարութիւնը, աւելի լաւ չէ՞ դարմանումի չակսիլ մինչեւ, որ Սիֆիլիսը լուրջ երեսոյթ մը չառնէ»: Հակառակ գործածուած դեղերու կարգ մը անպատեհութիւններուն, պէտք է ամենախիստ դարմանում ընել անմիջապէս որ Սիֆիլիսը երեւան գայ: «Թէ ի՞նչ պատմեց Թրէփիմնէմը» յօդուածաշարքին մէջ պիտի անդրադառնանք այս ինդքին:

Պ. Պ. Ջ. (Պէրլին).— Սիֆիլիսի չարկեղը (շանքուը) նրեւալուն պէս, զայն կտրել հանելով, իիւանդութեան առաջքը առնելու համար կատարուած բոլոր փորձերը ապարդիսն մնացած են: Հակառակը պնդողը կամ տգէտ է եւ կամ շառւաթան:

Պ. Ճ. (ՍԵՎՐԱՆ-Փարիզ).— Առողջապահական խարիսորդներ եւ լուսաբանութիւններ կրնանք տալ բայց ոչ դեղագիր: Դեղագիր մը կրնայ օգտակար ըլլայ մէկուն եւ վնասակար՝ ուրիշին: Երիվորդի (շէրիտ-էօպիա) մասին ծօքթ. Պ. Քօլթեան յօդուած մը պիտի գրէ: Այդ որդը ծգելու համար գործածուած դեղներն են պտերի հիմքը. (extrait de l'ouvrage même) եւ նուռի կերչւէն համուած դեղ մը (pelletierine), նմանապէս դրամի կուտը եւալին:

Պ. Ճ. Գ. (Պէրլին).— Թայրա Պէյի փորձերը կը թուին իրական ըլլալ եւ ոչ թէ աճպարարական: Գիտական խիստ հակակշիռէ մը վերջ միայն կարելի է վճռական պատասխան տալ: